

Մովսես Հ. Դեմիրձյան  
Փիլ. գիյ. թեկնածու

## ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ՝

Ժամանակակից արժեքային փոխակերպումների  
համատեքստում\*

**Բանալի բառեր** – մշակույթ, ինքնություն, ազգ, փոխակերպում, գլոբալացում, արդիականացում, բարոյականություն:

### Մուտք

Մեր արագ փոփոխվող իրականությունում մարդիկ գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ձգտում են գտնել և ունենալ կայուն, անփոփոխ «կեցություններ», որոնց դերում հիմնականում հանդես են գալիս ազգային և կրոնական ինքնությունները: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ սոցիալական կեցությունը ենթարկվում է ժամանակակից գլոբալացման և գիտատեխնիկական զարգացման անմիջական ազդեցությանը, ինչի հետևանքով արագ փոխվում է, մինչդեռ մարդիկ չեն կարող նույնքան արագ փոխել աշխարհի նկատմամբ իրենց աշխարհայացքային և արժեքային դիրքորոշումը, ինչի արդյունքում նախընտրում են փախուստը դեպի ավանդականություն, այլ ոչ թե արդիականացումը: Դա նոր կյանք է հաղորդում ազգային-ավանդական և կրոնական ինքնություններին՝ իրենց համապատասխան բարոյական բաղադրիչներով, դարձնում է դրանք արդիական և պահանջված, առաջացնում է անցյալը որպես ապրված, իմաստավորված փորձ պահպանելու անհրաժեշտության գիտակցում:

### 1. Ազգային ինքնությունը որպես մշակութային երևույթ

Ազգային ինքնության պահպանումը ժամանակակից աշխարհի կենտրոնական հիմնախնդիրներից է, որի լուծումից է կախված քաղաքակրթության հարստությունն ապահովող գործոններից մեկի՝ ազգերի և ազգային մշակույթների բազմազանության լինել-չլինելու հարցը: Ազգային-էթնիկական ինքնության պահպանման հարցն առավել արդիական է փոքր

Փ (ՃԶ) փարի, թիվ 1 (61), հունվար-մարտ, 2018  
ՎԷՎ համահայկական հանդես

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 16.02.2018:

ազգերի ու ժողովուրդների համար, որոնց կենսագործունեությունը խարսխված է կյանքի կազմակերպման առավելապես ավանդական, քան արդիական մեխանիզմների վրա: Դրանց տարբերություններն առավել ակնհայտ են դառնում հենց գլոբալացման գործընթացներում, երբ կյանքի նույն սոցիոմշակութային մոդելը փոխարինելու է գալիս ավանդականին: Այդ փոփոխությունը ենթադրում է, ի թիվս այլոց, անհատի պատասխանատվության ոլորտի ընդլայնում սոցիալական հարաբերություններում և բարոյական պատկերացումների արդիականացում: Լայն իմաստով դա նշանակում է նոր ինքնության ձևավորում, որով պայմանավորված է մարդկանց տվյալ հանրությին՝ գլոբալ սոցիումին ներգրավվելու և հետագա զարգացման հնարավորությունը: Բայց նոր ինքնության ձևավորման կամ ինքնության արդիականացման փոխարեն, որպես կանոն, տեղի է ունենում «փախուստ դեպի ավանդական (ազգային-էթնիկական) ինքնություն», որը, սակայն, այլևս ի գորու չէ ներդաշնակ լինելու սոցիալական նոր իրողություններին: Այդ փախուստն ունի իր յուրահատուկ պատճառները. նախ՝ ավանդական ինքնությունը քիչ թե շատ ապրված, իմաստավորված է և այս տեսակետից ավելի հուսալի է թվում, **երկրորդ**՝ վարքի մոդելների տեսանկյունից ավանդական ինքնությունը առավել հասկանալի է, քան նոր ձևավորվելիք ինքնությունը, և այդ պատճառով մարդկանց համար ավելի նախընտրելի է դառնում, **երրորդ**՝ ավանդական հասարակություններն ունեն ավանդական ապրելակերպի փորձ, որի դրական ազդեցությունը կենսագործունեության տարբեր ոլորտներում ձևավորել է որոշակի արժեքներ (ավանդական արժեհամակարգ), որն այլևս համարժեք չէ նոր իրականությանը, բայց կրկին դառնում է նախընտրելի՝ սոցիալական նոր իրողությունների համեմատ, որոնցում ապրելու փորձ այդ մարդիկ դեռ չունեն ու հետևաբար չզհետն այդ փորձով ենթադրվող դրական ազդեցությունների մասին, և **չորրորդ**՝ ավանդական մտածողությունը, որպես կանոն, հեռու է վարքի այլընտրանքային մոդելների փնտրտուքից, և հենց այդ այլընտրանքային ապրելակերպի և մտածելակերպի բացակայությունն իր հերթին ստիպում է ավանդական հասարակություններին կառչած մնալ ազգային-էթնիկական ինքնության համակարգից:

Ավանդական հասարակության այս ոչ ձկունության հետևանքով գլոբալացման հոսանքների ազդեցությամբ առաջնային է դառնում ոչ թե ինքնության արդիականացման, այլ ազգային ինքնության պահպանման խնդիրը: Վերջինս, սակայն, ինքնությունը չկորցնելու հիմնահարցի մեթոդաբանական տեսակետից այնքան էլ համարժեք պատասխանը չէ, քանի որ **նախ**՝ ազգային ինքնության պահպանումն ինքնին չի նշանակում ինքնության կենսունակության ապահովում<sup>1</sup>, **երկրորդ**՝ պատմականորեն, իսկ գլոբալացման դարաշրջանում՝ առավել արագ, այդ նույն ավանդական հասարակություններում ազգային ինքնությանը զուգահեռ ձևավորվում է նաև սոցիալական ինքնություն, որն առավել պահանջված է դառնում ժամանակակից գլոբալացող աշխարհում:

Բնականաբար, ազգայինն էլ է սոցիալական, բայց սոցիալական ինք-

<sup>1</sup> Բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունենում ավանդական ինքնության նոր ինստիտուցիոնալացում, օրինակ, իրավական կամ այլ հարաբերությունների համակարգերում:

նության պարագայում փոխվում են մարդու ինքնանույնականացումները: Եթե ազգային ինքնության մեջ մեծ դեր է խաղում ընդհանուր պատմությունը, սոցիալական ինքնության պարագայում՝ միասնական ապագան, ազգայինում՝ ես-ը անջատված չէ Մենք-ից, մինչդեռ սոցիալականում առաջնային է դառնում հենց այդ անջատումը, դեռ ավելին՝ ազգայինում ես-ը պայմանավորված է Մենք-ով, իսկ սոցիալականում՝ ես-ն այն է, ինչ ինքն իրենից ստեղծում է մարդը, ազգայինը սիմվոլիկ է, սոցիալականը՝ պրագմատիկ և այլն:

Սա նշանակում է, որ սոցիալական նոր հարաբերությունների համակարգում խոսքը լայն իմաստով նախևառաջ ազգային ինքնության ոչ թե պահպանման մասին է լինելու, քանի որ դրանով չի ապահովվում ինքնության կենսունակությունը, այլ արդիականացման մասին: Ազգային ինքնության կենսունակության ապահովմանն ուղղված արդիականացումը կարող է իրականացվել ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոնների ազդեցությամբ: Դրանց շարքին են պատկանում, օրինակ, ընդհանուր թշնամին, պետականության կորստի իրական սպառնալիքը և այլն: Դրական գործոնների դեր են կատարում երկրի տնտեսական զարգացումը, որի հիմքում դրվում է ազգային (սեփական) և անկախ տնտեսական համակարգ ունենալու գաղափարը (օր.՝ Չինաստանում)<sup>2</sup>: Երկու դեպքում էլ մեկ անգամ ևս ի հայտ են գալիս ազգայինի սոցիալական բնույթը և հիմքը, և եթե բերված օրինակներում և՛ դրական, և՛ բացասական գործոններն ունեն միավորող դեր, ապա հնարավոր են դեպքեր, երբ ազգայինի կորստի վտանգն առաջնաա հենց սոցիալական անոմիայի<sup>3</sup> հետևանքով<sup>4</sup>: Սոցիալական անոմիան առհասարակ համարվում է ազգային ինքնագիտակցության գլխավոր թշնամի<sup>5</sup>:

Ազգային ինքնության արդիականացումն իրականացվում է ավանդական ազգից քաղաքական ազգ ձևավորելու միջոցով: Սա նշանակում է ազգի կազմակերպման նոր մոդել, որի շրջանակներում ազգը կազմակերպվում է քաղաքականապես և ոչ թե, ինչպես մինչ այդ էր, ավանդական-մշակութային գործոնների հիման վրա: Վերջիններս ժամանակին, երբ ձևավորում էին մտածողության և վարքի նորմեր, ունեցել են առաջնային նշանակություն: Սակայն ավանդական-մշակութային գործոնների դերը փոխվում է քաղաքական ազգի ձևավորման գործընթացում, երբ դրանք այլևս հանդես են գալիս միայն որպես փորձ և որպես դրա դրական արդյունքի խտացված արտահայտություն՝ արժեքներ: Եթե այդ արժեքներն ուղղված են անցյալին, և դրանցով փորձ է արվում կարգավորելու և կազմակերպելու հանրության ներկան, ապա քաղաքական ազգի ձևավորման հարցում գործ ունենք առավելապես ապագայի տեսլականի հետ, որում արդեն առաջնային դեր է կատարում քաղաքացիական դիրքորո-

2 Տե՛ս **Семенов И. С.** Дилеммы национальной идентичности: политические риски и социальные приобретения, «ПОЛИС (Политические исследования)», 2009, N 6, էջ 8-23:

3 **Անոմիա** – հասարակության բնականոն կենսագործունեությունն ապահովող արժեքների և նորմերի համակարգերի փլուզման հետևանքով առաջացող վիճակ: Անոմիայի առաջացման հիմնական պատճառներից է հակասությունը մի կողմից՝ հասարակության անդամների հետաքրքրությունների ու պահանջմունքների, իսկ մյուս կողմից՝ դրանց բավարարման միջոցների միջև:

4 Տե՛ս **Мертон Р. К.** Социальная структура и аномия, «Социология преступности (Современные буржуазные теории)». М., 1966, էջ 299-313:

5 Տե՛ս **Семенов И. С.**, նշվ. աշխ.:

շումը: Քաղաքական ազգի ձևավորումը չի ենթադրում էթնիկական ինքնության ոչնչացում կամ կորուստ, այլ նշանակում է քաղաքացու ինքնանույնականացումների նոր համակարգի ստեղծում, որում քաղաքականը նույնացված է ազգայինի և քաղաքացիականի հետ<sup>6</sup>: Քաղաքական ազգի կառուցումը հիմնվում է ներգրավման սկզբունքի վրա, համաձայն որի՝ երկրում ապրող բոլոր ազգությունները և համայնքներն ընդունում են «նոր խաղի» միևնույն քաղաքական կանոնները: Ընդ որում, այստեղ կարող է զգալի նշանակություն չունենալ մշակութային գործոնը, այն է՝ այդ ազգությունների և համայնքների պատմությունն ու արժեհամակարգը<sup>7</sup>: Խնդիրն այստեղ ավելի շատ «գաղափարական այդ բազմազանությունը գործնական միակերպության»<sup>8</sup> վերածելն է: Քաղաքական ազգը միևնույն խնդիրների շուրջ համախմբվող մարդիկ են, որոնք մի կողմ են դնում միասնական պատմություն, լեզու, կրոն չունենալու և բարեկեցության տարբեր մակարդակներում գտնվելու հանգամանքները և միասնական գործունեություն են ծավալում նույն նպատակների իրականացման համար: Այս իմաստով, օրինակ, «քաղաքական ազգ» հասկացության բովանդակության մեջ կարող են ավելի շուտ մտնել երկրում բնակվող ազգային փոքրամասնությունները, քան արտերկրում ապրող հայերը: Միևնույն ժամանակ, քաղաքական ազգ ձևավորելու գործընթացում պետությունը բոլորի համար ապահովում է մասնակցության հավասար պայմաններ և մոտիվացիա:

Քաղաքական ազգ ձևավորելու գործընթացը չնախաձեռնելու դեպքում քաղաքական բովանդակություն և ծանրաբեռնվածություն է ստանում էթնիկական գործոնը, ինչը հղի է քաղաքականության մեջ ազգայնամոլության, ավանդապահության և ծայրահեղական այլ ուղղությունների տարածման վտանգով: Մինչդեռ էթնիկական ինքնությունը քաղաքական ազգ կառուցելու գործընթացում կարիք ունի հենց ապաքաղաքականացման, ինչը նշանակում է քաղաքական գործընթացներում էթնիկական գործոնի նվազեցում և դրա սահմանափակում մշակութային, լեզվական, պատմական և ոչ քաղաքական այլ ոլորտներում: Միևնույն ժամանակ տեղի է ունենում նաև էթնիկական ինքնության ապապետականացում, ինչը նշանակում է, որ քաղաքական ազգ ձևավորելու գործընթացներում դադարում է սկզբունքային նշանակություն ունենալ «պետականակիր էթնոս» հասկացությունը, որն իր դերը կատարել է դեռ պետության ձևավորման ժամանակներում:

Քաղաքական ազգը ենթադրում է նոր ինքնություն, որն այլևս ավանդական նույնականացումների՝ նախկինում ձևավորված համակարգերի պարզ կրկնությունը, վերարտադրությունը չէ: Խոսք կարող է լինել միայն արդիականացված ինքնության մասին, որտեղ գործ ունենք նույնականացումների նոր հիերարխիայի կամ առաջնայնությունների նոր համակարգի հետ: Ինքնության արդիականացման գլխավոր պայմանը բարոյական

6 Стів Смирнов А. Н. Этничность и культурный плюрализм в контексте государственной политики, «ПОЛИС», 2005, N 4, էջ 36:

7 Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Հակոբյան Կ. Կ., Ազգ, ազգային պետություն և քաղաքական ազգ, «Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումներ», պրակ VII, Եր., 2010, էջ 88-98:

8 Стів Հարությունյան Էդ., Ազգային ինքնության պահպանման մասին, «Դրօշակ», 2004 (1581), էջ 92:

պատկերացումների արդիականացումն է, առանց որի հնարավոր չէ նույնականացումների նոր համակարգ ստեղծել: Այդ նոր կամ արդիականացված ինքնությունը տարբերվում է ավանդականից և ունի իր յուրահատկությունները: Նախ՝ եթե ավանդական ինքնությունը ձևավորվում է տարերայնորեն և պատմության երկար ժամանակահատվածում, ապա նոր ինքնությունը ձևավորվում է նպատակային և տեսանելի ժամանակում: Եթե ավանդական ինքնության պարագայում մեծ դեր է խաղում մարդկանց որևէ հանրային անդամ լինելու, միասնական պատմություն, վարքի նորմեր և արժեհամակարգ ունենալու հանգամանքներից ստացվող (այդ թվում և հոգեբանական-թերապևտիկ) ազդեցությունը, ապա նոր ինքնությունն առավել անհատական է և գիտակցված: Անհատականացման գործընթացն առհասարակ հատուկ է ժամանակակից աշխարհին և մշակույթի ոլորտում դրսևորվում է, օրինակ, ենթամշակութային միավորների ձևավորման տեսքով կամ արվեստում, ուր վաղուց արդեն անցում է կատարվել հայտնի ուղղություններից և դպրոցներից դեպի անհատական ոճեր: Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է փորձի անհատականացմամբ. երբ չեն գործում անցյալի կոլեկտիվ փորձի փոխանցման և ներկայումս միասնական փորձ ձեռք բերելու մեխանիզմները, տեղի է ունենում նաև կենսափորձի անհատականացում: Կոլեկտիվ փորձ ձեռք բերելու և փոխանցելու մեխանիզմների կիրառումը դժվարանում է գլոբալացման պայմաններում՝ կապված կյանքի կազմակերպման կոլեկտիվ միջոցների ձգնաժամի հետ, որոնք այլևս կենսունակ չեն և չեն ապահովում մարդկանց համար բարեկեցության ցանկալի մակարդակ: Այդ անհատականացման թերևս ամենաազդեցիկ արդյունքներից է արժեհամակարգի փոփոխությունը, որը կարող է արտահայտվել երկու ձևով: Ավանդականից քաղաքական ազգ ստեղծելու ընթացքում գործ ունենք նպատակային արդիականացման հետ, մինչդեռ եթե տեղի չի ունենում նպատակային արդիականացում, որի խնդիրը նոր ընդհանուր կենսակերպի և մտածելակերպի տարածումն է (համապատասխան վերանձնային արժեքներով), ապա ժամանակի ընթացքում հասարակության մեջ ձևավորվում ու տարածվում են արդյունաբերական քաղաքակրթության իշխող վերնախավին բնորոշ արժեքներ, որոնք իրենց հիմքում անհատական են: Դրանք ազգային չեն՝ անկախ այն բանից, թե ինչպես ընկալել ազգայինը՝ ավանդական-մշակութային, թե՛ քաղաքական իմաստով, քանի որ չեն կրում պատմական անցյալի ծանրաբեռնվածությունը, չունեն հանրային (ազգային) խնդիրներ ու շահեր ձևակերպելու և դրանց շուրջ մարդկանց համախմբելու ներուժ, կապված չեն ազգային ինքնության մայր օջախից՝ Հայրենիքից, դուրս բնակվող նույն ազգի ներկայացուցիչների հետ:

Այդքանով հանդերձ՝ այդ արժեքները ժամանակակից պայմաններում ոչ թե պարզապես ներդաշնակ գոյություն ունեն նույն հասարակության մեջ՝ ազգային արժեհամակարգի կողքին, այլ ձևավորվում են վերջինիս անկենսունակության հաշվին և դրա հետևանքով առաջացող հոգևոր վակուումում, երբ չի կատարվում ազգային ինքնության նպատակային արդիականացում, որի մարմնավորողը պետք է դառնա քաղաքական ազգը:

Ժամանակակից հայ հասարակությունում արդյունաբերական քաղա-

քակրթության արժեհամակարգը գլխավորապես կրում է միջին խավը, որի դերն ու նշանակությունը հասարակական հարաբերությունների համակարգում դժվար է թերագնահատել: Միջին խավն այն մարդիկ են, որոնք ունեն նյութական և հոգևոր որոշակի պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ կայուն եկամուտ: Միջին խավն է գաղափարախոսության հիմնական կրողը, սպրանքների ու ծառայությունների, ինչպես նաև մշակույթի (գրականություն, թատրոն, կրթություն, քաղաքականություն և այլն) հիմնական սպառողը և պետության կայունության գրավականը: Միջին խավն առաջին հերթին առանձնանում է եկամուտների չափով, սակայն սոցիալական այդ շերտը լավ հասկանալու համար անհրաժեշտ է նաև իմանալ դրա արժեքային բաղադրիչը<sup>9</sup>: Վերջինս շեշտված սպառողական ուղղվածության է, որի ձևավորման մեջ մեղքի իր չափաբաժինն ունի նաև սպառողական հոգեբանությունը: Բայց ոչ միայն: Արժեքներն առհասարակ փոխվում են այն դեպքում, երբ նոր արժեքային համակարգում ավելի հեշտ է դառնում հասնել հաջողության և բարեկեցության, քան հնի դեպքում: Բնականաբար, ավանդական-մշակութային և հայրենասիրական արժեհամակարգերը Հայաստանի ոչ մրցակցային տնտեսության, քաղաքական ու տնտեսական իշխանությունների սերտաձման պարագայում հաջողության և բարեկեցության գրավական չեն կարող դառնալ: Սպառողական արժեհամակարգ կրողները, ըստ էության, այն մարդիկ են, որոնք չունեն վերանձնային արժեքներ, նրանց արժեհամակարգը սկսվում և ավարտվում է անհատին վերաբերող (հաճույք, հանգստություն, բավարարվածություն և այլն) երևույթներով: Խնդիրն այն չէ, որ այսօր Հայաստանի միջին խավն առաջնորդվում է սպառողական հոգեբանությամբ (ուզում է ունենալ աշխատանք, մեքենա և արտասահմանում հանգստանալու հնարավորություն), այլ այն, որ դրանից ավելին ոչինչ չի ցանկանում և ոչ մի բանի չի ձգտում: Չի ձգտում վերանձնայինին, որն այն ամենն է, ինչը հնարավոր չէ ուտել, հագնել կամ այլ կերպ սպառել, բայց անկախ դրանից՝ դա արժեք է մարդու համար: Այս իմաստով՝ թե՛ հայրենասիրությունը, թե՛ ազգայնականությունը, թե՛ պատմության ու ազգային մշակույթի կրողը լինելու գիտակցությունը և դրանցից բխող վարքն ու արժեքները վերանձնային են, սակայն գլոբալացման ժամանակակից պայմաններում քաղաքական օրակարգում չձևակերպվելու դեպքում հայտնվում են նյութապաշտություն դավանող արժեհամակարգի կործանարար ազդեցության դաշտում:

## 2. Բարոյական ինքնությունը որպես ինքնության համակարգի առանցքային տարր

Ինքնության ձևավորման ընթացքում մեծ դեր է խաղում բարոյականը՝ պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատկերացումների և վարքի նորմերի ամբողջությունը: Ինքնության ձևավորման ընթացքում կարելի է առանձնացնել գործոնների երկու խումբ՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական գործոնների շարքին են դասվում լեզուն, միաս-

<sup>9</sup> Այդ մասին տես **Մելքոնյան Ա. Պ.**, Զանգվածային մշակույթի գործառնական առանձնահատկությունները սպառողական հասարակությունում, Եր., 2009, էջ 57-78:

նական պատմությունն ու պատմական հիշողությունը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները: Այս գործոնների ազդեցությամբ ձևավորվող ինքնությունը արժևորվում է որպես փոփոխվող պայմաններում սեփական (անձնային, հանրային) «ես»-ը չկորցնելու հիմնական միջոց: Ինչ վերաբերում է ավանդական ինքնության բարոյական բնութագրությանը, ապա որքանով որ այս ինքնությունը ձևավորվում է տևական ժամանակահատվածում, հիմնականում՝ առանց ուղղորդման, տարերայնորեն, այդքանով այստեղ միախառնված են ժողովրդական ու կրոնական, բարոյական պատկերացումներն ու վարքի նորմերը:

Ինքնությունն արտահայտվում է արժեքային բովանդակությանը գաղափարական և կիրառական նշանակություն (ելք) տալու միջոցով: Առհասարակ, ինքնության ձևավորման գոյաբանական հիմքերի շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում տվյալ հանրություն կիրառվող «խաղի կանոնները»՝ մտածելակերպի ու ապրելակերպի նորմերը: Վերջիններիս էկզիստենցիալ նշանակության հիմնավորումը ստեղծում է տվյալ հանրության արժեքային կողմնորոշման չափանիշներն ու արժեհամակարգը: Այդ արժեքները, ամենայն հավանականությամբ, գործում են առավելապես հանդգնության մակարդակում և դրսևորվում են գաղափարախոսության և պրակտիկ կենսագործունեության տեսքով:

Համաշխարհայնացման ժամանակակից գործընթացներին և արագ փոփոխվող իրականությանը հարմարվելու՝ հասարակության կազմակերպական ներքին կարողությունները պարզելու նպատակով անհրաժեշտ է հասարակական կենսակերպը ենթարկել ռացիոնալ վերլուծության և արժևորման: Նման վերլուծությունը ցույց է տալիս, որ ավանդական հասարակություններում գերակշռող է ավանդական մշակույթը, որն արտահայտվում է առավելապես վարքի նորմերի մշակման և այդ նորմերը սերնդե սերունդ փոխանցելու մեջ: Այդ փոխանցումը տեղի է ունենում ոչ այնքան կրթության և սոցիալականացման այլ միջոցների, որքան նույնչափ ավանդական դաստիարակության ճանապարհով: Պայմանականորեն կարելի է ասել, որ ավանդական հասարակություններում մարդկանց սոցիալականացման առաջնային «բնագավառը» մշակութային է:

Ավանդական մշակույթը կյանքի կազմակերպման ու կանոնակարգման կայուն (ստատիկ) մոդել է, որում նախասահմանված են իրադարձություններն ու վարքի նորմերը: Այդ մոդելում կյանքը հանդես է գալիս որպես մի վիճակ (ոչ թե գործընթաց), որին վերադառնալու խնդիր ունի մասնավորապես ազգային-մշակութային ժամանակակից վերածնունդը: Ստատիկ վիճակում գտնվող ավանդական մշակույթը դժվար է ենթակվում փոփոխությունների, հետևապես նաև արդիականացման, քանի որ դարերի ընթացքում կայունացած ավանդույթների, մտածելակերպի ու ապրելակերպի նորմերի ցանկացած փոփոխություն ընկալվում է որպես ինքնությանը սպառնացող վտանգ: Պետականության երկարատև բացակայության կամ պատմական այլ պայմաններում հանրային ներքին կյանքի կազմակերպման գերխնդիր ունեցող ավանդական մշակույթը, որպես կանոն, հակված է արտաքին աշխարհից մեկուսի գործառնելու տրամաբանությանը: Ի դեպ, վերջինս չի հակասում ժամանակակից հասարակագիտության մեջ

մշակույթի գործառնության լայնորեն կիրառվող սինթեզետիկական մեկնաբանությանը, ըստ որի՝ որևէ համակարգի (տվյալ դեպքում՝ մշակույթի, հանրության) ներսում կարգավորվածությունը հնարավոր է միայն արտաքին կապերում կարգավորվածության նվազման, այն է՝ ապակարգավորվածության (էնտրոպիայի) ավելացման հաշվին:

Պատմական որոշակի ժամանակահատվածում մշակույթի նման գործառնությունը հանգեցնում է մշակույթի ստատիկ մոդելի ձևավորմանը, որում արտաքին աշխարհի հետ տեղեկատվական շփումը հասցված է նվազագույնի:

Մինչդեռ համաշխարհայնացման գործընթացների մեջ ներքաշված ազգային-մշակութային մոդելներն այլևս դատապարտված են «վիճակից» վերածվելու «գործընթացի», կյանքի ստատիկ մոդելից անցում կատարելու դինամիկ մոդելին, որպեսզի ապահովեն իրենց կենսունակությունը: «Այն պարզ պատճառով, որ ապագայի մարտահրավերներից այլևս որևէ ազգ պատսպարվելու տեղ չունի, նշանակում է՝ բոլոր ազգերն էլ բառացիորեն դատապարտված են լինելու ժամանակակից: Հետևաբար, կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազգային մշակույթները ևս պետք է արդիականացվեն»<sup>10</sup>: Մինևույն ժամանակ պարզ է, որ համաշխարհայնացման հակասական բնույթն առավել ակնհայտ կերպով դրսևորվում է կյանքի կազմակերպման գյուղական (ավանդական) ու քաղաքային (քաղաքական) մոդելների և նրանց առանցքը կազմող բարոյական պատկերացումների համեմատական վերլուծության մեջ:

Ահավասիկ, որքան հասարակությունը կապված է համայնքային կապերով, որքան քիչ է դեկավարվում քաղաքակրթական նորմերով, այնքան ավելի հեշտ է նրա անդեմ զանգվածը պարուրել կրոնական կամ հայրենասիրական գաղափարախոսության միասնական «շղարշով»: Նման հասարակության անդամների մեջ խորապես արմատավորված է այսպես կոչված ավանդական բարոյականությունը, որն ամբողջական տեսք է ստանում սոցիալ-մշակութային համակարգում և դառնում վարքի նորմ<sup>11</sup>:

Ավանդական բարոյականության գործառնության ոլորտն առավելապես գյուղն է, գյուղական համայնքը, որի կենսակերպն արմատապես տարբերվում է քաղաքային կյանքից և առավելապես նպաստում է ավանդական մշակույթի վերարտադրմանը և ոչ թե նրա քննադատական վերլուծությանն ու փոփոխմանը: Համայնքային կենսակերպը կապված է միօրինակ, տարիների և նույնիսկ ամբողջ կյանքի ընթացքում չփոխվող աշխատանքի հետ: Այս առումով, ավանդական հասարակության գերխնդիրներից մեկը սովորույթների ու բարքերի վերարտադրությունն է՝ անցյալի կենսակերպի կրկնությունը ներկայում և ապագայում: Դրանով իսկ ստեղծվում է հասարակական հարաբերությունների այն նվազագույն գոյաբանական հիմքը, որն անհրաժեշտ է հասարակական տվյալ կենսակերպը վերարտադրելու համար: Համապատասխանաբար, վերարտադրվող գոյաբանական հիմքը նաև ավանդական արժեքների (ավանդույթների, բարոյա-

10 Հարությունյան Էդ. Ա., Հայկական շարունակականություն. գործառնության հուսալիության հիմնահարցը, «Բանբեր Երևանի համալսարանի», N 1 (115), Եր., 2005, էջ 3:

11 Տե՛ս Арутюнян Ю. В., Дворожева Л. Н., Сускова А. А. Этносоциология. М., 1998, էջ 217:



կան պատկերացումների) վերարտադրության բնագավառ է:

Բարոյական ինքնության արդիականացման խնդիրն առնչվում է նաև գլոբալացման պայմաններում սոցիալական և ավանդական-մշակութային ոլորտների փոխհարաբերության հետ: Բանն այն է, որ գլոբալացման հետևանքով սոցիալական ոլորտն արագ փոփոխվում և վերակազմավորվում է, փոխվում է նաև տնտեսական, քաղաքական, իրավական հարաբերությունների բնույթը: Մինչդեռ ավանդական-մշակութային հարաբերությունների բնագավառում արդիականացմանը միտված փոփոխություններ գրեթե չեն կատարվում: Վերջինիս պատճառը, թերևս, այն է, որ ավանդական հասարակություններում գերիշխում է հասարակական գիտակցության առօրյա-կենցաղային մակարդակը: Առավել վառ կերպով դա դրսևորվում է, թերևս, բարոյական գիտակցության պարագայում, որտեղ առօրյա-կենցաղային մակարդակը կազմող ավանդույթները, սովորույթները, արժեքներն ու գնահատման չափանիշները գերակա նշանակություն ունեն ավանդական հարաբերությունների կազմավորման և կազմակերպման մեջ: Իսկ բարոյական գիտակցության առօրյա-կենցաղային և տեսական մակարդակների միջև հիմնական տարբերությունը դրանցում հասարակական երևույթների արտացոլման խորությունն է:

Այսպես, բարոյական գիտակցության առօրյա-կենցաղային մակարդակում գործ ունենք մարդկանց միջև կենցաղային, ավանդական, ամեն օր կրկնվող հարաբերությունների և դրանց գնահատման ու արժևորման նույնքան ավանդական սկզբունքների հետ: Գիտակցության այս մակարդակում «իշխում է» էմպիրիզմը, ըստ որի՝ բարոյականության մասին պատկերացումներն անմիջապես ածանցվում են կենսափորձից: Մինչդեռ բարոյական գիտակցության տեսական մակարդակում գործ ունենք հասկացությունների ու կատեգորիաների և, հետևաբար, հասարակական երևույթների էության արտացոլման հետ: Բարոյական գիտակցության առօրյա մակարդակը գերծ չէ նաև դոգմատիզմից, մինչդեռ տեսական մակարդակում գործ ունենք ռեֆլեքսիայի և քննադատության հետ: Ավանդական հասարակություններում, ըստ էության, չի ձևավորվում բարոյական գիտակցության՝ տեսական մակարդակում խնդիրները քննարկելու ավանդույթ: Բայց ոչ միայն ավանդույթ, այլև կարծես կարիք կամ, այլ կերպ ասած, սոցիալական պահանջ կամ պատվեր չկա: Ավանդական հասարակությունները, լինելով առավելապես փակ համակարգեր, ներսում ծագող այլախոհության կամ դրսից համակարգ ներթափանցող տեղեկատվության միակողմանի, այլընտրանքներ չձանաչող իմաստավորում և արժևորում կատարելով, պահպանում են դոգմատիզմն ու կարծրատիպային մտածողությունը, այն դեպքում, երբ հասարակական համակարգերի զարգացումը մեծապես պայմանավորված է հակակշիռների կիրառման հնարավորություններով (ազատականացվող հանրային հարաբերությունները հակակշռվում են իրավական նորմերով, ազատության աճը՝ պատասխանատվության բարձրացումով և այլն): Գիտակցության մեջ նմանատիպ փոփոխությունների իրականացումը բարդ է, քանի որ ավանդական հասարակության գիտակցության մեջ գերիշխում է կենցաղային մակարդակը, ինչը չի նպաստում տեսական մակարդակում երևույթների իմաստավոր-

ման և արժևորման սոցիալական պահանջի ձևավորմանը:

Հասարակական փակ համայնքներն ապրում են դարավոր ավանդույթներով, մինչդեռ քաղաքացիական հասարակություններին բնորոշ է հարմարավետության սկզբունքը: Քաղաքացիական կենսակերպն ավելի հեղուկ է, հանդուրժող և ազատախոհ, մինչդեռ համայնքային կյանքին բնորոշ է զգուշավորությունն ու այլախոհության նկատմամբ անհանդուրժողականությունը: Պատկերավոր ասած՝ քաղաքը խելացի է, գյուղը՝ ուժեղ: Ավանդական, փակ հասարակություններին բնորոշ բարոյականությունը կայուն է և նպաստում է ավանդական կենսակերպի վերարտադրությանը, մինչդեռ քաղաքացիական-ազատական բարոյականությունը առավել ճկուն է և դրանով իսկ նպաստում է անհատի ինքնիրացմանն ու ինքնության դրսևորմանը:

Հասարակության զարգացման ընթացքում այս երկու «բարոյականությունները», որպես կանոն, անհամատեղելի են: Սովորույթներով ղեկավարվող փակ համայնքը սարսափում է քաղաքացիական ազատ հարաբերություններից, ավանդական բարոյականության սակավությունից, այն ամենից, ինչը բաց քաղաքացիական հասարակությունը դարձնում է քաղաքակիրթ: Քաղաքացիական հասարակությունն էլ իր հերթին ստանձնում է ավանդական հասարակությունը քաղաքակրթելու գործառույթ: Ավանդական ազգից քաղաքական ազգի վերածվելու դժվարին գործընթացն անվերապահորեն ենթադրում է ավանդական մշակութային-բարոյական մոդելի քննադատական վերանայում, ինքնանույնացման մոդելների փոփոխություն, ինքնության արդիականացում: Բանն այն է, որ մեզանում, օրինակ, դեռևս չեն լուծվել էթնոհամայնքային և քաղաքակրթական շահերի միջև ներդաշնակության հաստատման հիմնախնդիրները: Ի դեպ, էթնոհամայնքային ինքնության պարագայում հասարակության նկատմամբ մարդկանց պարտականություններն ու կապվածությունը խարսխված են բարոյականի վրա, մինչդեռ քաղաքացիական ինքնության պարագայում պարտավորություններն ու կապվածությունը խարսխված են օրենքի հեղինակության վրա: Ինքնության արդիականացման գործընթացում անպայմանորեն առաջանում է հասարակության նկատմամբ մարդկանց պարտականությունների իրականացման երկընտրանք (ավանդական-բարոյականի և իրավականի միջև), որի լուծումը կախված է հասարակության ինտելեկտուալ զարգացածության աստիճանից, գիտության՝ որպես սոցիալական ինստիտուտի, կայացածության չափից, ավանդական-մշակութային գործոնների ազդեցությունից և այլն: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ մեզանում էթնոհամայնքային և քաղաքացիական պարտականությունների միջև կան մի շարք գործառնական տարբերություններ<sup>12</sup>:

**Եթե քաղաքացիական հասարակությունը կրթության և սոցիալականացման այլ միջոցներով չի նպաստում հասարակության քաղաքակրթման գործընթացին, ապա այն ժամանակի ընթացքում վերածվում է «խճանկարային» համայնքի, ուր կրթությունն ու գիտությունը դառնում են լուսանցքային (մարգինալ), գերակշռող են դառնում վարքի կարծրատիպային ձևերը, և ակտիվանում են «անձի պաշտամունքի»**

12 См. Тошенко Ж. Т. Этнократия. История и современность. Социологические очерки. М., 2000, էջ 410 – 411:

**գործառնության մեխանիզմները: Նման հասարակությունն ապրում է ինտելեկտուալ դեգրադացիա, քանի որ գերիշխող են դառնում ավանդույթները, դոգմաները, բարոյական արգելքները, բայց ոչ առողջ բանականությունը և գիտելիքը: Առհասարակ արգելքներին անվերապահորեն հավատարիմ հասարակությունները տառապում են ինֆանտիլիզմով (պարզամտություն):**

Հայտնի է, որ պարզամտությամբ տառապող ավանդական հասարակություններում միևնույն ժամանակ ցածր է նաև հասարակական պատասխանատվության մակարդակը, քանի որ պատասխանատվությունն աճում է ազատությունների աճին զուգընթաց, իսկ նշված տիպի հասարակություններում ազատությունների փոխարեն «իշխում» են արգելքները, առաջին հերթին՝ բարոյական բնույթի: Այն, որ բարոյական արգելքները սերնդափոխություն չեն ապրում, չեն քննարկվում և վերաբժանվում սերունդների կողմից, նշանակում է, որ այսպիսի համակարգերում հասարակական գիտակցության մեջ ևս գերակա նշանակություն ունի առօրեական-կենցաղային մակարդակը: Մինչդեռ միայն տեսական մակարդակում է հնարավոր կիրառել ռեֆլեքսիվ և քննադատական մոտեցումը հասարակական հարաբերությունների բնույթի, զարգացման տրամաբանության ու հեռանկարների, արգելքների ու ազատությունների գործադրման նպատակահարմարության ու մարդու և հասարակության վրա ազդեցության նկատմամբ:

Առաջընթացի առումով հասարակություններն իրարից տարբերվում են առաջին հերթին ազատությունների չափով և իրավական ու բարոյական մակարդակում այդ ազատությունները սահմանափակող նորմեր ձևակերպելու կարողությամբ: Փաստ է, որ ազատությունների սահմանափակման, զսպման տրամաբանությամբ առաջնորդվող հասարակությունները սահմանափակում են ինտելեկտուալ և բարոյական զարգացման (արդիականացման) իրենց հնարավորությունները: Նման հասարակություններում ժամանակի ընթացքում առաջնային դեր են սկսում խաղալ սոցիալ-դարվինիզմի «օրենքները»՝ ֆիզիկական ուժը, վախը և այլն:

Ինտելեկտուալ թերհասունության մասին են վկայում նաև հասարակության մեջ տարածվող ագրեսիվությունը, անհանդուրժողականությունը, նեղացկոտությունը, հոտայությունը: Տրամաբանական է, որ այսպիսի հասարակություններում առաջնային պետք է լինեն բնագոյային, ոչ թե հոգևոր պահանջմունքների բավարարմանն ուղղված գործողությունները: Հարկ է նկատել, որ նման հասարակական համակարգի կտրուկ և արմատական փոփոխությունը դժվար թե ցանկալի արդյունք տա, քանի որ ցանկացած փոփոխություն, առավել ևս՝ կտրուկ և համակարգային, ծնում է համարժեք հակազդեցություն: Այդ հակազդեցություններից խուսափելու համար, թերևս, հասարակական հարաբերությունների արդիականացման առաջին քայլը պետք է լինի վերջիններիս հումանիզացումը:

Ավանդական ազգից քաղաքական ազգի վերափոխման գործընթացը ենթադրում է նաև **բարոյականության հումանիզացում**<sup>13</sup>, այն է՝ բարո-

13 Տե՛ս **Никонов А.** Свобода от равенства и братства. Моральный кодекс строителя капитализма. М., 2008, էջ 71:

յականությունն է մարդու համար, ոչ թե մարդը՝ բարոյականության, բացարձակ արժեք է մարդը, ոչ թե «բարոյական» գաղափարը կամ կերպարը: Ինչպես կրոնական բարոյականության իմպերատիվ ոճը երբեմն հայեցակարգի հումանիստական լինելը դարձնում է վիճահարույց, այդպես էլ կարծրացած, դոգմատիկ բնույթ ունեցող ավանդական բարոյականությունը զարգացող հասարակության համար շատ դեպքերում ոչ թե խթան է, այլ խոչընդոտ: Որքան ուժեղ է ավանդական բարոյականության ազդեցությունը, այնքան ավելի կաղապարված են (վերահսկելի են) հասարակական գիտակցությունը, ազատատենչությունն ու արդիականանալու ձգտումը: Մինչդեռ քաղաքակիրթ հասարակություններում բարոյականի մասին պատկերացումների վերաիմաստավորումը սովորական «աշխատակարգ է»: Հասարակական հարաբերությունների հումանիզացումը՝ որպես ավանդական ազգից քաղաքական ազգի վերափոխման անբաժանելի գործընթաց, ենթադրում է զարգացման նպատակի և դրա իրականացման ուղիների ձևակերպում: Ուստի գլոբալացման հոսանքների մեջ հայտնված մեծ ու փոքր շատ պետություններ ընդունել են այսպես կոչված «զարգացում կրկնօրինական սկզբունքով» մոդելը:

Սակայն ինչպես ցույց է տալիս անցումային հասարակությունների փոխակերպումների փորձը, հետխորհրդային նորանկախ պետությունների նորագույն պատմությունը խիստ կասկածելի է դարձնում հասարակական հարաբերությունների վրա արևմտյան կենսակերպի կրկնօրինական հումանիզացնող ազդեցության հանգամանքը:

Ավանդական ազգից քաղաքական ազգի, այն է՝ միասնական սոցիոմշակութային գիտակցությամբ սոցիալ-քաղաքական միավորի, վերափոխման գործընթացում կարևոր դեր է խաղում նաև հասարակության ինտելեկտուալացումը, գիտության՝ որպես հասարակական կյանքը քննության առնող գիտելիքների համակարգի, և կրթության՝ որպես այդ փորձը փոխանցող միջոցի կայացումը: Վերջինս անհրաժեշտաբար ենթադրում է մասնագիտական գիտելիքի՝ որպես պրոբլեմների լուծման ամենարդյունավետ ձևի ընդունում: Հասարակության ինտելեկտուալացումը նշանակում է նաև հասարակական հարաբերությունների հումանիզացում և բարոյական արգելքների մեղմում:

Ավանդական ազգից քաղաքական ազգի վերափոխման գործընթացում առանձնահատուկ դեր է խաղում հատկապես քաղաքացիության սկզբունքը՝ հռոմեական մշակույթի այդ հանճարեղ հայտնագործությունը, ըստ որի՝ քաղաքակիրթ հասարակությունը հիմնված է ոչ թե ազգակցական-բարեկամական կապերի և ոչ թե նույն աշխարհայացքային (օր.՝ կրոնական) կողմնորոշումների վրա, այլ գրված օրենքով կարգավորվող պրակտիկ կյանքի վրա: Եվ որքանով մարդիկ միջավայրի արդյունքն են, այդքանով քաղաքակիրթ հասարակությունը ստեղծում է կյանքին պիտանի, հասարակության զարգացմանը նպաստող բարոյականություն և մարդուն զերծ պահում առասպելաբանված բարոյական իդեալները կրկնօրինակելու առավելապաշտական ձգտումներից: Անշուշտ, այս պարագայում ևս գործ ունենք բարոյականության՝ ոչ թե մարդուց վեր կանգնած սկզբունքի, այլ մարդու և հասարակության կյանքի կազմակերպմանն ու զարգացմանը

նպաստող երևույթի ընկալման հետ: Հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքում տեղի է ունենում նաև հանրային արժեքների ու բարոյականության և վերջիններիս վերահսկման նույնքան հանրային ձևերի «անհատականացում»՝ ենթամշակութային, դասակարգային, մասնագիտական և բազում այլ մակարդակներում: Արդեն գործ ունենք ոչ թե մեկ միասնական ավանդական արժեհամակարգի ու բարոյական նորմերի և դրանց վերահսկման կոլեկտիվ ձևերի հետ, այլ հասարակական հարաբերությունների բարդացմանը զուգահեռ բարդացող, բազմազան դրսևորումներ ու լուծումներ պահանջող արժեհամակարգի ու բարոյականության հետ, որոնց պարագայում վերահսկման ավանդական մեխանիզմներն արդեն անզոր են: Դրանց փոխարինելու է գալիս օրենքը՝ որպես համապարտադիր ու անխուսափելի երևույթ:

**Հասարակության ինտելեկտուալացման հեռանկարում հասարակության հավաքական ինտելեկտուալ կարողությունը գերազանցում է իշխանության հավաքական ինտելեկտուալ անկարողությանը: Այդ իրավիճակը երբեմն բնութագրում են որպես «անվերադարձի կետ»<sup>14</sup>: Այն է՝ մարդիկ փոխվում են, և այլևս անհնար է նրանց կառավարել հին, ավանդական մեթոդներով, պարուրել կրոնական կամ կեղծ-հայրենասիրական գաղափարախոսության շղարշով:**

**Մովսես Հ. Դեմիրճյան** – գիտական հետազոտությունների բնագավառները՝ կյանքի փիլիսոփայություն, մշակույթի փիլիսոփայություն, գլոբալացում, ազգային մշակույթ և ինքնություն, սպառողական հոգեբանություն:

## Summary

### NATIONAL IDENTITY

In modern conditions of transformation of value system

Movses H. Demirtshyan

**Key words** – culture, identity, nation, tradition, transformation, globalization, modernization, morality.

The paper analyzes the process of globalization in terms of the impact on the system of self-identification, in particular, on the transformation of national identity. It is known that it is in danger of extinction due to the leveling and aggressive distribution in traditional societies' global (uniform) system of consumer values. For national identity in this context, there is only one way to survive – the transformation of nation from traditional to political. The process of modernization is also indicated by the fact that the core of this modernization is the modernization of the nation's moral, which involves the construc-

14 Никонов А. Судьба цивилизатора. Теория и практика гибели империй. М., 2006, էջ 48:

tion of a new hierarchy of values. It is high-lighted that such modernization can take place only under the influence of a targeted system of self-identifications on the society (nation), resulting in possible formation of a political nation – a new community of people for whom the ethnic, religious, and cultural differences in the future are less important than the resolution of common social problems.

However, as a rule, this process of formation of a new identity is initiated by the political power that comes to the realization of the need to build a system of social relations based on new principles and relevant objectives, but, as the experience of post-Soviet countries shows, this need may go unnoticed. As a result, the society begins to form not transpersonal values (to what are the concerns and values of the political nation), but more personal, consumer, which are characterized as bourgeois. They are a direct threat to national identity, as depriving the system of self-identification of such unites transpersonal orientation as the experience of the past, traditions, culture and history, national and state interests and goals are. The threat to national identity in the system of bourgeois values exist on the ontological level, because the spread of bourgeois values (as opposed to national) facilitated by the fact that in a consumer society more viable are exactly the bourgeois values that contribute to a more well-being.

Considering the fact that during historical development the traditional nations transform into political nations, a number of theses are put forward, affirming that moral representations, norms of behaviour, ideals make the spiritual core of any nation. These factors are particularly obvious in the so-called agrarian states, where the rural way of life is a favourable basis for strengthening traditional morality. At the same time, the transformation of a traditional nation into a political one inevitably implies changes in traditional moral dispositions and the critical evaluation of the latter in terms of suitability for developing the society, overcoming stereotypes and forming a new ideology focused more on the state and the person rather than on the nation and collectivism. In this case, 'political nation' means a socio-political community endowed with general ethno-cultural consciousness. It is supposed that a traditional nation is successfully transformed into a political one when the society is intellectualized.

## НАЦИОНАЛЬНАЯ ИДЕНТИЧНОСТЬ

### В контексте современных трансформаций системы ценностей

Мовсес А. Демирчян

**Ключевые слова** – культура, идентичность, нация, трансформация, глобализация, модернизация, мораль.

В статье анализируется процесс глобализации с точки зрения его влияния на систему самоидентификаций человека, в частности, на трансформации национальной идентичности. Известно, что последняя находится под угрозой нивелирования и исчезновения вследствие агрессивного распространения в традиционных обществах однообразной системы потребительских ценностей. Для национальной идентичности в данном контексте существует лишь один способ выживания – трансформация носителя культуры, нации, из традиционной в политическую. В статье рассматривается данный процесс, а также указывается, что его стержнем является нравственная модернизация нации, подразумевающая новую иерархию ценностей. Подобная модернизация происходит лишь под целенаправленным воздействием на систему самоидентификаций общества (нации), вследствие чего формируется политическая нация – новая общность людей, для которых этнические, религиозные, исторические и культурные различия менее важны, чем решение общих проблем.

Новая идентичность инициируется, как правило, политической властью, которая нуждается в системе общественных отношений на новых принципах, но, как показывает опыт постсоветских стран, это происходит не всегда. Вследствие этого в обществе формируются не надличностные ценности политической нации, а личностные, потребительские, которые характеризуются как буржуазные. Последние ставят под угрозу национальную идентичность, лишая человека объединяющих надличностных ориентиров – истории, традиций, культуры, национальных и государственных интересов.

Принимая за основу положение о том, что в ходе исторического развития традиционные нации трансформируются в нации политические, утверждается, что стержнем духовной культуры любой нации являются нравственные представления, нормы поведения, идеалы. Последние наиболее сильны в так называемых аграрных государствах, где распространён сельский образ жизни – благоприятная основа для укрепления традиционной морали. Трансформация традиционной нации в политическую с неизбежностью предполагает ломку традиционных моральных установок и критическую их оценку с точки зрения пригодности для развития общества, преодоления стереотипов и формирования новой идеологии, ориентированной скорее на государство и личность, чем на нацию и коллективизм. Под политической нацией в данном случае имеется в виду социально-политический коллектив с общим этнокультурным сознанием. Предполагается, что наиболее успешным окажется тот проект преобразования

традиционной нации в политическую, где будет осуществляться интеллектуализация общества.

## REFERENCES

1. **Gachev G.** Nacional'nie obrazy mira. M., 1995. (In Russian)
2. **Hakobyan K. K.** Azg, azgain petutyun ev qaghaqakan azg. // Ancumain hasarakutyun sociomshakutain pokhakerpumner. Prak VII, Yer., 2010. (In Armenian)
3. **Harutyunyan Ed.**, Azgain inqnutyan pahpanman masin // Droshak, 2004 (1581). (In Armenian)
4. **Harutyunyan Ed. A.** Haykakan sharunakakanutyun. gorcarnakan husaliutyun himnaharc. «Banber Yerevani Hamalsarani », N 1 (115), Yer., 2005. (In Armenian)
5. **Harutyunyan Y. V.**, Dvorjeva L. N., Suskova A. A. Etnosociologia. M., 1998. (In Russian)
6. **Melqonyan A. P.** Zangvatsain mshakuyti gorcarnakan arandznahatkutyunner. sparoghakan hasarakutyunum. Yer. 2009. (In Armenian)
7. **Merton R. K.** Social'naya struktura i anomia. // "Sociologia prestupnosti (Sovremennye burjuaznie teorii)". M., 1966. (In Russian)
8. **Nikonov A.** Svoboda ot ravenstva i bratstva. Moral'niy kodeks stroitelya kapitalizma. M., 2008. (In Russian)
9. **Nikonov A.** Sud'ba civilizatora. Teoria i praktika gibeli imperiy. M., 2006, p. 48. (In Russian)
10. **Semenenko I.S.** Dillemi nacionalnoy identichnosti: politicheskie riski i socialnie priobreneniya // "POLIS (Politicheskie issledovaniya)", 2009, N 6, p. 8-23. (In Russian)
11. **Smirnov A.N.** Etnichnost i kulturni pluralizm v kontekste gosudarstvennoy politiki. // "POLIS", 2005 № 4, p. 36. (In Russian)
12. **Toshenko J.T.** Entokratia. Istorija i sovremennost. Sociologicheskie ocherki. M., 2000, p. 410 – 411 (In Russian)